

Թագուհիին սեփական եւ այժմ Բոլտի Բեցովի Թանգարանին մէջ պահուած «Կենդանեաց Գորգը», 1522-3 թուին շինուած, եւ խայաս էղ-Տին ձամի անուն պարսկի մը յիշատակարանով, որ կրնայ գորգին տէրը, հիւսողը կամ նուիրողն ըլլալ, բան մը որոշ չէ: Ասիկա է Սաւաֆեան հնագոյն թուականով գորգը որ ծանօթ է ինծի:

Սաւաֆեան պարսկական վերածնունդին մէջ հայերը ունեցած են տնտեսական ու մշակութային մեծ բաժին, բան մը որ այսօր այլ-եւս անտարակոյս պատմական իրականութիւն մըն է: Այս վերածնունդին հետքերը գուցէ փնտռելու է Թիմուրի անողորմ բռնազաղթեւուն մէջ, որոնց չորհիւ Թուրքեստանի անապատները չնցնել փորձեց: Տարուած զաղթականները, որոնց մէջ մեծազանգուած հայ խումբեր կային, ընտրուած արհեստաւորներ էին: Սաւաֆեան շրջանէն ալ ունինք շատ մը վկայութիւններ բռնազաղթ հայերու: Շահ Ապպասէն շատ առաջ Շահ Թահմասպ Երկու թուռն մէկ քարով զարնել կը ջանար, եւ նոյնիսկ Թուրքերուն հետ համաձայնութիւն մը կար կարող գետնի հաւասար ընել եւ Թուրք-Պարսիկ սահմանադրուիլը գծել տասը մղոն լայնքով մը, որուն բնակիչները Թուրքիոյ կամ Պարսկաստանի խորերը փոխադրուած ըլլային, եւ երկիրը անապատի վերածուէր իբր ապագայ ապահովութիւն Թուրք եւ Պարսիկ կայսրութեանց միջեւ: Ինչ որ Թահմասպ յղացաւ՝ Ապպաս Ա կրցաւ յաջողցնել առանց Թուրքերուն: Թահմասպ կը վերադրուի Վրաստանէն Պարսկաստանի խորերը տարուած 30,000 քրիստոնեաներու կամ վրացիներու բռնազաղթը, որոնց մէջ անտարակոյս հայեր ալ կային: Այլուր երկար պիտի խօսիմ այս մասին, որով աւելորդ կը նկատեմ հոս կրկնել:

Պարսկաստան այսպէս ոչ միայն իր վերածնունդին կը սպասէր Սաւաֆեան շրջանի զարգացած հայ վաճառականութեան լիահոս ոսկիով, այլ եւ իր արուեստն ու արհեստը զարկ կը ստանար բռնազաղթ հայ ոսկերիչներով, ճարտարապետներով, ոստայանիկներով: Շահերը որեւէ խորշանք չունէին հայ արհեստաւորները նոյնիսկ իրենց սրբատեղիներուն մէջ գործածելէ. « Գիտենք թէ Նատիր Շահ գործածեց քրիստոնեայ (հայ) աշխատաւորներ՝ կառուցանելու համար նոյնիսկ իր դամբարանը Մէշատի մէջ, ուստի զարմանալու չենք հայ գորգագործներ գտնելով մասնաւորաբար արեւմտեան Պարսկաստանի մէջ, իրական Ֆէրաղան գորգի մը վրայ, 1750ին հիւսուած, կը գրտնենք հայերէն յիշատակարան մը գրուած գրաւէտէ մը եւ շատ լաւ հիւսուած նեղ ջրջագօտիին մէջ: Կ. Պոլսոյ, ինչպէս նաեւ Փոքր Ասիոյ մէջ հայերը շատ ճարտար նկատուած են: Միջին դարերէն ըսկըսած իրենց առանձնայատուկ գեղարուեստը չունին, այլ պարզապէս իրենց տէրերուն արուեստն է որ ըրած են⁽³⁴⁾, եւ միայն իրենց կրօ-

(34) Արզարեւ, որքան որ հայերը իրենց Թուրք եւ Պարսիկ տիրակալներուն